

# Ն. Գ. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

## ԱՐԽԻՎԱՅԻՆ ՆՈՐ ՆՅՈՒԹԵՐ ԱՐԵՎՄՏՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԻ ՎԻՃԱԿԻ ՄԱՍԻՆ\*

Թ. 128բ— Տնասկցություն  
Ռուս դեսպան պարոն Դը Գիրսի հետ

12/25 ապրիլ 1913<sup>17</sup>:

Ռուս դեսպան պար. Դը Գիրս փափագ հայտնած ըլլալով Պատրիարքարանի և դաշնակցության ներկայացուցիչներու հետ տեսակցություն մը ունենալ, ըստ դեսպանատան կարգադրության, Պատրիարքարանի կողմէ պար. Գ. Զ.-ը<sup>18</sup> և ....ը, դաշնակցության կողմէ բժիշկ պար. Զավարյան<sup>19</sup> ներկայացան ռուս դեսպան պար. Դը Գիրսին:

Միտալի ընդունելութենէ մը վերջ, պար. Դը Գիրսը ըսավ:

— Ընդունեցի ձեր ծրագիրը և ուշի ուշով ուսումնասիրեցի զայն: Այդ ծրագիրը լայն գիծերով հայ ազգին պահանջները կներկայացնէ, կըմբռնեմ, թէ ինչո՞ւ մանրամասնութեանց մեջ չեք մտած և իրավունք ունիք:

Ձեր ծրագիրը, որ յուր ընդհանուր գիծերուն մեջ լավ պատրաստված է, իմ տեղեկագրովս պիտի ղրկեմ Պետերբուրգ՝ արտաքին գործոց նախարարին, սպասելով անոր դիտողություններուն:

\* Շարունակված «Էջմիածին» ամսագրի 1965 թվականի № Բ—Գ—Դ-ից:

<sup>17</sup> Ապրիլ 12/25-ի տեսակցությունը, որ գրի է առնված ձեռագրի թ. 20ա-ում, ձեռագրի վերջում դրված է երկրորդ անգամ, երկրորդ պատվիրակի կողմից: Շահեկանության համար այս գրառումը ևս տալիս ենք:

<sup>18</sup> Գրիգոր Զոհրապ, Թուրքական պառլամենտի անդամ, հայտնի փաստաբան և ազգային գործիչ:

<sup>19</sup> Դաշնակցական նշանավոր երկու գործիչներ:

Թրքահայոց Պատրիարքարանը այն ատեն կա՛մ նույնությամբ և կա՛մ բարեփոխելով— ի՞նչ ընդունի ռուս կառավարության դիտողությունները և յուրացնէ— պիտի պատրաստե՛ յուր վերջնական ծրագիրը թրքահայոց պահանջները արտահայտող և պիտի ներկայացնէ զայն եվրոպական պետությանց դեսպաններուն: Մինչև ռուս արտաքին գործոց նախարարին պատասխան մը ստանալս, պաշտոնապես կարծիք մը չեմ կրնար հայտնել Ձեր ծրագրին վրա: Բայց թող ներվի ինձ Ձեր ծրագրի երկու կետերու վրա իմ անձնական և ոչ պաշտոնական կարծիքս հայտնել:

Ա. Որ է՛ն էական կետն է և կգտնվի ծրագրին զուգը, այն է, որ Դուք կուզեք եվրոպացի բարձր կոմիսար մը, անվանված եվրոպացի պետություններեն և վավերացված սուլթանին կողմից: Այս ձև պահանջում մը հակառակ է սուլթանին վեհապետական իրավանց և իր մեջ անջատողական դիտումներ կենթադրե, և նախընթաց ալ չունի. հետևաբար, շատ հավանական է, որ պիտի մերժվի թե՛ եվրոպական պետությանց և թե՛ սուլթանին կողմից: Ըստ իս, պետք է բարեփոխել այդ հոգվածը և պահանջել բարձր կոմիսարի մը անվանումը սուլթանին կողմից, համամտությամբ եվրոպական պետությանց: Այս ձևը ընդունված ձև մըն է շատ մը նմանօրինակ պարագաներու մեջ: Երբ եվրոպական պետությունները իրենց հավանությունը տան, անշուշտ պիտի հավանին այնպիսի անձի մը, որ ծանոթ ըլլա ան իր կարողությամբը, չազդվելու օսմանյան պետության շողքորթություններեն և գործել անկախ և ազատ-



անհն, ինչ որ գոհացում կուտա այս հոգվածի  
դարձի ձևին տակ ծածկված պահանջումին:  
Ձեռն կրնար Ձեզ ապահովել, թե բարձր կո-  
վիտսարը անպատճառ եկրոպացի պիտի ըլլա:  
Սեպտեմբեր հավանական է, որ այդ մասին պի-  
տի աշխատվի, բայց եթե կոմիսարը օսման-  
լի ըլլա, անշուշտ քրիստոնյա պիտի ըլլա:  
Բ. Կետն այն է, որ դուք ձեր ծրագրին մեջ  
դարձր կոմիսարին օրենքները բացատրելու ձևին  
տակ տեղական պետքերուն պատշաճ օրենք-  
ներ և կանոնադիրներ շինել: Նախ, առանց  
անջատողական ձգտումներու, երկրին ընդ-  
հանուր օրենքները կարելի չէ փոխել, և ի՞նչ  
հարկ, արդեն գիտենք, թե առանձնաշնորհյալ  
նահանգի մը մեջ երկրին ընդհանուր օրենք-  
ները իրենց ուժը մեծապես կկորսնցնեն:

Բարձր կոմիսարը, որ գործադիր մարմինը  
կենթակցացնե, չի կրնար բնավ օրենք և կա-  
նոնադիր շինել: Այդ իրավունքը միմիայն  
տրված է օրենսդիր ժողովին, որ այս պա-  
րագային մեջ նահանգային ընդհանուր ժո-  
ղովն է. այս վերջինն ալ կրնա առ առավել  
տեղական պետքերուն պատշաճ ու վարչա-  
կան կամ ելևատական օրենք կամ կանոնա-  
դիր պատրաստել: Դուք Ձեր ծրագրին մեջ,  
թե՛ ընտրությանց և թե՛ պաշտոններից ան-  
վանման մեջ, կես առ կեսի դրույթները կա-  
ռաջարկեք. մինչ և ոչ մեկ գավառի մեջ հա-  
յերը մեծամասնություն կկազմեն: Ըստ ձեր  
տված վիճակագրության, վեց նահանգնե-  
րու մեջ բնակչության առ առավելն 45%-ը  
հայ է. 45 %-ը իսլամ և մնացյալ 10%-ը ու-  
րիշ ազգերն է:

Մենք պատասխանեցինք, թե թվի տեսա-  
կետով իրավունք ունի ղեսպանը, բայց  
պետք է նաև նկատի առնել տնտեսական և  
մտավորական տեսակետով հայոց իրենց  
դրացիներեն անհունապես գերազանց ըլլալը:

Պարոն Զ.-ը ավելցուց, թե ինքը արդեն  
ձեռնարկած է հայաբնակ վեց նահանգաց  
տնտեսական և մտավորական վիճակագրու-  
թյունը պատրաստել, ուր պիտի տեսնվի հա-  
յոց և իսլամաց մեջ եղած ահագին տարբե-  
րությունը:

Դեսպանը ըսավ, թե այդ շատ կարևոր աշ-  
խատություն մըն է, զոր կուզե կցել ծրագրին  
և իր տեղեկագրին, և որ պիտի ծառայե իրր  
գորավոր փաստ մը հայոց դատին: Պարոն  
Զ. այն դիտողության վրա, թե իր աշխատու-  
թյունը լրացնելու համար բավական ժամա-  
նակի կկարոտի, բանի որ միայն Սվազի վի-  
ճակագրությունը կրցած է ամբողջացնել,  
ղեսպանը ըսավ, թե կարելի եղածին չափ  
շուտ ղրկել կուզե իր աշխատությունը և  
միայն Սվազի վիճակագրությունը կրավել,

որովհետև այդ կրնա իբր օրինակ ծառայել  
մյուս հինգ նահանգաց: Պարոն Զ. խոստա-  
ցավ ղեսպանին հանձնել Սվազի վիճակա-  
գրությունը ընդհանուր տեսության մը հետ,  
որպեսզի ղեսպանը կարենա հինգաբլան  
փոստով Պետերբուրգ ղրկել ծրագիրը:

Դեսպանին հարցման պատասխանելով  
ըսինք, թե թափառական քուրդերուն մեծա-  
զույն մասը վեց նահանգներուն մեջ միայն  
կթափառին, իսկ մեկ փոքր մասը վեց նա-  
հանգներեն դուրս կելլե:

Դեսպանը տեղեկություններ ուզեց Նուպար  
փաշայի և անոր գործակալերպին վրա: Ըն-  
դարձակ տեղեկություններ տալով Նուպար  
փաշայի վրա, ըսինք, որ Նուպար անունը  
համբավ մը ունի շնորհիվ իր հորը և թե ինքը  
Պողոս փաշա, իր զարգացմամբ, իր տա-  
ղանդով և իր հարստությամբ կարևոր դիրք  
մը ունի Նվրոպայի բարձր դասակարգի մեջ  
և միշտ հարաբերություններ մշակած է Փա-  
րիզի և Լոնդոնի քաղաքական և սեղանավո-  
րական անձնավորությանց հետ, և թե ինքն  
իր տաղանդը, սիրտը ի սպաս դրած է հայ-  
կական դատին համար: Պարոն Դը Գիրսը  
ըսավ, թե Նուպար փաշայի գործունեությու-  
նը շատ օգտակար կրնա ըլլալ հայոց դատին՝  
մշակելով դիվանագիտական աշխարհը,  
պատրաստելով հանրային կարծիքը և ժո-  
ղովրդական համակրանք մը ստեղծելով ղե-  
սի հայոց դատը:

Նորհուրդ հարցուցինք ղեսպանին, թե ի՞նչ  
պետք է ըլլան մեր հարաբերությունները  
մյուս ղեսպանատանց հետ: Դեսպանը պա-  
տասխանեց, թե պետք է լավ հարաբերու-  
թյուններ մշակել բոլոր ղեսպանատանց հետ,  
մանավանդ առանց կեղծիքի խոսիլ անոնց  
հետ, թե համակիր պետությանց, այն է  
Ֆրանսայի և Անգլիո ղեսպանատանց բերա-  
նացի տեղեկություններ տալ ձեր ծրագրին  
վրա, ի պահանջել հարկին նույնիսկ ծրագիրը  
նույնությամբ տալ անոնց:

Վերջապես խորհեցինք ղեսպանեն, որ-  
պեսզի արտահայտվի, թե որքա՞ն կարելի է  
հուսալ հայկական դատին հաջողության հա-  
մար: Դեսպանը պատասխանեց, թե այդ  
մասին պաշտոնապես չի կրնար բան մը  
ըսել և պետք է սպասել իր պետության հրա-  
հանգներուն, բայց անձնապես կրնա մեզ  
վստահացնել, թե ռուս կառավարությունը  
համակիր է այս պահուս մեզ նկատմամբ և  
պիտի ջանա, որ Բալկանյան կնճիոր կար-  
գադրվեն անմիջապես ետք, հայկական  
հարցը զեն դիվանագիտական սեղանի վրա և  
մեծ հույս կա, որ գոհացում պիտի տրվի հա-  
յոց պահանջումներուն: Բայց, ավելցուց ղես-  
պանը, ինչպես գիտեք, քաղաքականության



մեջ բան մը կարելի չէ գուշակել կանխապես, բաղաբականության մեջ ամեն բան կախում ունի օրը-օրին առաջ եկած դեպքերին և դիվանագիտության առած ձևերին:

Պր. Զավարյան և պր. Զավրիև ռուս լեզվով ըսին դեսպանին, թե կոնտրոլին գործադրության մասին կարծյաց փոքրիկ տարբերություն մը կա Պատրիարքարանի և Փարիզի պատգամավորության մեջ:

Դեսպանը նույնպես ռուսերին պատասխանեց, թե հայերը եվրոպական կոնտրոլ մը կ'պահանջեն և պետք է պահանջեն, բայց պետության անկ է որոշել այդ կոնտրոլին գործադրությունը, ինչ կերպով ավելի նպատակահարմար է:

#### Թ. 24ա— Տեսակցություն

ռուս դեսպանատան առաջին թարգման

Պր. Մանդելշտամի հետ

29/11 ապրիլ 1913:

Թարգման— Ռուս դեսպանատան տրված ծրագրին ուրիշի ալ տրված է:

Պատվիրակ— Այո՛, էջմիածնի Կաթողիկոսին և Փարիզի պատգամավորության:

Թարգման— Մեր մեջ համաձայնություն կար, թե մինչև որ ռուս դեսպանատան կարծիքը չառնվեր, ծրագիրը գաղտնի պիտի պահվեր: Ցավալի է, որ առանց սպասելու և հակառակ մեր համաձայնության ղրկվեք միևնույն ատեն թե՛ Կաթողիկոսին և թե՛ Փարիզի պատգամավորության: Նուպար փաշան ձեր ծրագիրն առնելով, իբրև թե իր հայ և օտարազգի ընկերներուն հետ պատրաստած ծրագիր մը, կհանձնե Փարիզի ռուս դեսպանին, ըսելով, թե այդ ծրագիրը կղրկե էջմիածնին՝ Կաթողիկոսին, անոր հավանությունը առնելու համար: Եվ թերևս այդ ծրագրին մեկ-մեկ օրինակ ալ հանձնած է մյուս դեսպաններուն և, զարմանալի չպիտի ըլլա, եթե հայոց ծրագիրը տպված տեսնենք փաշային բարեկամ և աշխատակից պր. Բերարի լրագրին մեջ: Հայերը, իրենց դատին հաջողության համար, պետք է որ մեկ ծրագիր և մեկ ուղղություն ունենան, մինչդեռ հիմ.ս Պատրիարքարանը մեկ ծրագիր կպատրաստե, դաշնակցականները ուրիշ մը, Նուպար փաշա՛ն երրորդ մը և թերևս Կաթողիկոսն ալ բարեփոխյալ չորրորդ մը ներկայացնե: Պետք է նաև անպայման գաղտնապահություն, մինչ շատ հավանական է, որ օսմանյան կառավարությունը, որ ձեզի թշնամի կհամարեք, ձեր պահանջները հասկնալով, այսօր ըստ այնմ կպատրաստե իր զենքերը: Այս պայմաններու մեջ, եթե

հայոց դատը ձախողի, պատճառը իրենք և ղած պիտի ըլլան:

Կաթողիկոսին դիմումին վրա, Ռուսիո Կայսրը փափագ հայտնեց գիտնալ, թե ի՞նչ են թրքահայոց պահանջները և, իր հրամանին համեմատ, Պոլսո դեսպանը հայոց պատրիարքին դիմելով, խնդրեց հասկնալ հայերու բաղձանքները գրավոր և ծրագրի ձևով խմբագրված, որպեսզի ինքն ալ իր ուսումնասիրությամբ և դիտողություններով ղրկե կեդրոնի կառավարության, որ իր կողմից կա՛մ իր հավանությունը և կա՛մ իր դիտողությունները հայտնելով, պիտի վերադարձնե: Այն ատեն է միայն, որ հայերը այդ ծրագիրը—նույնությամբ կամ ռուս կառավարության դիտողությանց համաձայն սրբագրված—իբրև իրենց վերջնական ծրագիր պիտի ներկայացնեին պետք եղած տեղերը: Ահա մեր համաձայնության կետերը: Մինչդեռ այսօր բոլորովին հակառակը տեղի կունենա և, կրկնեմ այս առթիվ, շատ ցավալի է: Հարցը թրքահայոց հարցն է, թրքահայոց պահանջներն են, հետևաբար թրքահայոց Պատրիարքարանը միայն [կարող է]—իբրև հայ ժողովրդի ներկայացուցիչը—պահանջներ հրապարակ դնել կամ ներկայացնել եվրոպական մեծ պետությանց: Պատրիարքարանը միայն պետք է գործը ղեկավարե, իսկ Կաթողիկոսը և պատգամավորությունը պետք է որ հետևին Պատրիարքարանի գծած ուղղության:

Պատվիրակ— Մեղմացուցիչ պարագաներ գտա արդարացնելու մեր քայլերը և զանազան բացատրություններ տվի, խոստանալով պետք եղած հրահանգները գրել տալ Փարիզի պատգամավորության:

Թարգման— Ինձմե այլևայլ տեղեկություններ առնելն վերջ Նուպար փաշայի վրա, անցավ երկրորդ խնդրի մը:

Հողային հարցի լուծման վերաբերող հողվածին իբր պատճառաբանություն բերված հողվածին մեջ մատնանշած եք և կցած օսմանյան կառավարության երկու որոշումները: Նախ՝ որոշումներու ո՛ր թվականին ըլլալը կպակսի, և երկրորդ՝ այդ որոշումները, ըստ ձեր գրավոր բացատրության, պիտի քային ապացուցելու կառավարության հակասական հրամանները և վերջին կարգադրության՝ հայերու համար աննպաստ հանգամանքը: Մինչդեռ ես ուսումնասիրեցի ձեր առաջ բերած այդ երկու պետական որոշումները, և եզրակացությունս այն է, թե երկրորդ որոշումը ոչ այլ ինչ է, եթե ոչ առաջինի ավելի ընդլայնված ձևը և ավելի ուրեմն նպաստավոր հայերուդ համար:



Պատվիրակ— խոստացա, թե՛ Բվականները և թե՛ հարկ եղած բացատրությունները, իր վերջին առարկության մասին, ներկայացնել մյուս անգամ: Ի վերջո հայտնեցի, որ . . . Ի առաջնորդ Պսակ վարդապետի<sup>20</sup> որոշումներուն աննպաստ հոգվածին առթիվ, Պատրիարքարանը ցավ զգացած է և բացատրություն պահանջած, և գոհացում տալու համար ուսու կառավարության, պաշտոնական ազդով մը, Պատրիարքարանի կողմն կհայտարարվի, թե դիտողություններ և դրած են հիշյալ առաջնորդին և բացատրություն պահանջված է հոգվածին համար:

Հանձնեցի իրեն պաշտոնական հայտարարությունը պարունակող «Ազատամարտ» և «Ժամանակ» թերթերը:

Թ. 26ա— Տեսակցություն  
ուսու դեսպան Դր Գիրսի հետ,  
սրբազան պատրիարքին այցելության առթիվ  
1913.....

Ըստ կանխորոշ ժամադրության, դեսպանը իր առաջին թարգմանին հետ այցելեց սրբազան պատրիարքին<sup>21</sup> իր բնակարանը: Եպիսկոպոսության հանձնաժողովին կողմն ներկա էին երկու հոգի:

Քաղաքավարական խոսքերն վերջ դեսպանը հարցուց, թե ի՞նչ նոր լուրեր կան հայաբնակ գավառներին: Ըսվեցավ, թե գավառներու վիճակը ոչ միայն բարվոքած չէ, այլ ավելի վատթարած է. ամեն օր սպանություններ և հարստահրություններ տեղի կունենան. միտքերը վերջին ծայր գրգռված են. ջարդի վտանգը ակներև է, իսկ կառավարությունը բան մը չուզեր ընել կամ անկարող է. ոճրագործները ազատ և համարձակ կպատին: Իսկ Կիլիկիո մեջ վիճակը ավելի գեշ է, որովհետև իսլամներու միտքերը կիրգոնեն նաև Պոսսեն գացած թուրք գործիչներ . . . և ընկերներ, որոնք 1909-ի ջարդերը կազմակերպեցին. ասոնք քաղաքներ և գյուղեր շրջելով կգրգռեն իսլամ տղեռ ժողովուրդը և մյուս կողմն սերտ կապեր ունին և գաղտնի տեսակցություններ տեղական կառավարական մեծ և փոքր պաշտոնեից հետ: Ասոր հետևանքը պիտի ըլլար ներկա ապրիլին պատրաստված ջարդի ծրագիրը, եթե գերմանական զորահավոր մը չգար կենալ Մերսինի առջև և հրամանատարը պաշտոնական այցելություն տալով վալիին,

խստորեն շխտեր և շպառնար: Հրամանատարը այցելած է նաև Կիլիկիո Սրբազան Կաթողիկոսին<sup>22</sup> և վստահացուցած զինքը, թե զորահավոր մը միշտ հոն պիտի գտնվի և թե վտանգի պարագային ազդու գործունեություն մը ցույց պիտի տա:

Իրաց այս վիճակի հանդեպ սրբազան պատրիարքը պատգամավորություն մը զրկած էր ներքին գործոց նախարար Հաջի Ադիլ Բեյին, որ չէր բարեհաճած ընդունիլ զանոնք: Պատրիարքարանը ստիպված է ներկա կացությունը պատկերացնող տեղեկագիր մը պատրաստել և անձամբ պատգամավորության մը ուղեկցությամբ մատուցանել նախարարապետ Շեքեթ փաշային, և եթե կրկին լավ ընդունելություն չգտնե կամ նախարարապետը իրաց այս կացությունը դարմանելու համար ազդու միջոցներու դիմելով, եթե որեւէ հույս չներշնչե մեզի, այն ատեն, ապագա ծանր աղետի մը պատասխանատվության տակ շմակու համար, և՛ պատրիարքը և՛ իր վարչությունը պիտի ստիպվին հրաժարական տալ:

Դեսպանը ապահովցուց, թե ուսու կառավարությունը չպիտի թողու, որ ջարդեր տեղի ունենան հայաբնակ գավառներու մեջ և խրախուսեց սրբազան պատրիարքը, որ այսպիսի ծանրակշիռ վայրկյաններու մեջ չհրաժարի, այլ պայքարի մինչև վերջ: Իր հուշատետրին մեջ նշանակեց Պոսսեն Կիլիկիա զրկված թուրք գործիչներու անունները և գրգռիչ հոգվածներ պարունակող Աղանայի և Մերսինի թերթերու անունները: Իրեն տվինք աղոցման մեկ-մեկ օրինակ, որ բերած էր իր հետ Կիլիկիո պատվիրակը:

Դեսպանը ուղեց իմանալ, թե կառավարության կողմն Անատոլու զրկվելիք բարեկարգության հանձնաժողովներու մասին Պատրիարքարանին հավանությունը առա՞ծ է և Պատրիարքարանը իր կողմն անվանած է հայ անդամներ, և թե որքա՞ն լուրջ և նպատակահարմար են այդպիսի կոմիսիաներ:

Մենք ըսինք, թե Պատրիարքարանը միայն լրագիրներն և կոմիսիային անդամակցելու հրավիրված հայերն իմացած է կառավարության այդ մտադրությունը. Պատրիարքարանին ոչ մեկ նման առաջարկ եղած է: Անոնք հայերն հրավիրած են նեշտիտեճյան և Մոստիշյան էֆենդիները. երկուքն ալ պատվավոր հայեր են: Բարձրագույն դուռը սակայն անցյալի մեջ ալ հայաբնակ գավառները բարեկարգելու համար երկու-երեք անգամ կոմիսիաներ զրկելու ծրագիր հղացած է վերջին

<sup>20</sup> Խոսքը Բզիի առաջնորդ Պսակ վարդապետ Տեր-խորենյանի մասին է շատ հավանաբար:

<sup>21</sup> Հովհաննես Պատրիարք Արշարունի Կոստանդնուպոլսեցի (1911—1913 թ.թ.):

<sup>22</sup> Սահակ Բ Կաթողիկոս խապայան խարբերզցի (1902—1939 թ.թ.):



տարիներս, բայց երբեք գործադրությունը չտեսնվեցավ, հավանաբար այս ալ միևնույն բախտին պիտի արժանանա:

Դեսպանը— Ընդունեցի Ձեր ծրագիրը. շատ լավ պատրաստված է. մեկ-երկու կետերու վերաբերմամբ միայն դիտողություններ ըրի Ձեր ներկայացուցիչներուն. անկարևոր բաներ են. իմ տեղեկագիրս պատրաստեցի, մեկ-երկու օրեն Պետերբուրգ պիտի ղրկեմ: Ապտուծով քիչ ատենեն հայերն ալ իրենց բողձանքներն իրագործված պիտի տեսնեն:

Սրբազան պատրիարքը իր շնորհակալությունները հայտնեց և ըսավ, թե մեր հույսը ռուս կառավարության վրա դրած ենք:

Դեսպանը ուզեց հասկնալ, թե մենք տեղեկություն ունինք քրդական շարժման մը վրա և թե ի՞նչ է սրբազան պատրիարքի հայացքը այդ մասին:

Մենք պատասխանեցինք, թե Տիգրանակերտի առաջնորդին ստացված նամակն մը կտեղեկանանք, թե այն կողմերը շարժում մը պատրաստվելու վրա է Բեդերխան զադե Աբդուլղաֆի և Հյուսեյն փաշայի ձեռամբ, Հեքյարիի նախկին մեքուս շեյխ Թահա<sup>23</sup>, որ իթթիհադական էր, հիմա միացած է անոնց:

Ըստ երևույթին քուրդերը հայերուն մոտենալ կուզեն եղբու: Եթե քրդական այս շարժումը հայաբնակ գավառներեն դուրս միայն տեղի ունենա, հայերը կրնան բարյացակամ վերաբերում մը ունենալ:

Դեսպանը հանձնարարեց խիստ շրջահայաց ըլլալ այդ մասին, որովհետև հետևանքը կրնա աղետավոր ըլլալ:

Դեսպանը տեղեկություններ ուզեց Նուպար փաշայի գործունեության մասին: Հարցուց, թե նա որե՞նչ ծրագիր ներկայացուցած է:

Մենք փաշայի գործունեության մասին մանրամասն տեղեկություններ տալն վերջ, ըսինք, թե փաշան որե՞նչ մեկին ծրագիր ներկայացուցած չէ և նույնիսկ, երբ Փարիզի ռուս դեսպանը հայոց ծրագիրը ուզած է, փաշան պատասխաներ է, թե Թուրքիո հայոց Պատրիարքարանն է, որ պիտի ներկայացնե Պուստ ռուս դեսպանին: Վերջերս փաշայի Լոնդոն հրավիրվելու և հայասերներու շրջանակի մը մեջ բանախոսելու առթիվ, ան առանց մանրամասնությանց մեջ մտնելու, ստիպվել է շատ լայն գիծերով բացատրել հայոց բողձանքները:

Առիթնն օգտվելով ըսինք, թե փաշան ժամանակը հասած կհամարե պետք եղած տեղերը մեր ծրագրի վերաբերմամբ ավելի մանրամասն բացատրություններ տալ. ի՞նչ է այդ մասին դեսպանի կարծիքը:

Դեսպանը պատասխանեց, թե Հայկական հարցին նկատմամբ համակրական վերաբերում ունեցող պետությանց դեսպաններուն և լուրջ պետական անձանց տեղեկություններ ծրագրի մասին կրնա տրվիլ և նույնիսկ, եթե պահանջվի, ծրագիրն ալ, իբրև նախագիծ մը (ոչ վերջնական), կրնաք տալ: Իսկ ձեր վերաբերմամբ նվազ համակրանք տածող պետությանց դեսպաններու և այլ անձերու հետ ավելի վերապահ պետք է ըլլալ և ծրագրին վրա ընդհանուր գծերով միայն պետք է խոսել. մնացյալը կմնա փաշայի խոհեմության, լրջության և խելացիության, որ ունի ան, որոշելու, թե որո՞ւ հետ ի՞նչ վերաբերում պետք է ունենալ:

Մեր տեսակցությունը տևեց մոտ մեկ ժամ: Դեսպանը վերջին անգամ մալ հույս հայտնեց մեզ և հրաժեշտ տվավ:

1913 ապրիլ 7/20 (Մաղկապարդ)

(Տեսակցությունը գերմաներեն և կես ժամ տևեց)

Մերսին այժմ գտնվող գերման զորահավորին պր. հրամանատարը պաշտոնապես և մեծ համազգեստով ներկայանալով Կիլիկիո Սրբազան Կաթողիկոսին, հետևյալ տեսակցությունը տեղի ունեցավ:

Հրամանատար— Ուրախ եմ, որ Նորին Սրբազնությունը առողջ կտեսնեմ:

Կաթողիկոս— Շնորհակալ եմ իր բարյացակամ վերաբերումին:

Հրամանատար— Շատ գեղեցիկ կգտնեմ Կիլիկիան. սքանչելի բուսականություն ունի: Կաթողիկոս— Եգիպտոսի չափ գեղեցիկ է և դեռ ներսերը եթե երթան, ա՛լ ավելի պիտի սքանչանան երկրի պողաբերության վրա:

Հրամանատար— Աղանայի և շրջակայից մասին ապահո՞ւլ են և կասկածներ ունի՞ն:

Կաթողիկոս— Առ այժմ ապահով ենք և կառավարությունը հոգատար է, բայց չենք գիտեր, թե վաղը ի՞նչ կպատահի:

Հրամանատար— Կըսվի, թե հայերը ապստամբություն կուզեն հանել եղբու, ստո՞ւյգ է. եթե հայերը պատճառ չըլլան ու շտան, և թուրքերու կողմն անկարգություն պատահի, մենք պատրաստ ենք պաշտպանելու հայերը:

Կաթողիկոս— Երբե՞ք, սխալ է, ես կերաշխավորեմ այդ մասին, հայերը ընդհակառակը երկյուղի մեջ են, թե մի՞ գուցե կոտորած ըլլա: Շնորհակալ ենք Ձեր կառավարության

<sup>23</sup> Շեյխ Թահան նախկին մեքուսը չէ, այլ Աբդուլ Կադրիի եղբորորդին Վ. Փ. (Հետ գրությունն ու ստորագրության սկզբնատառերը բուն գրչին են պատկանում—Ն. Մ.):



րարյացականության համար և միշտ աղոթող:

**Հրամանատար**— Կցավինք, որ 909-ին ծանոթ կոտորածը պատահեցավ և եվրոպական պետությունը շատ զգացված են, որ օգտակար չեղան, բայց աներկմիտ ենք, չպիտի կրնան կրկնվիլ աշգլխի տխուր դեպքեր:

**Կարողիկոս**— Ափսոս, որ այնքան մեծ զոհեր տրվեցան և հայոց հավատարմությունը ի դուր կասկածի ենթարկվեցավ, արդարացիներու համար արյունոտ այդ տխուր դեպքերը:

**Հրամանատար**— Մենք հանուն մեր կառավարության զեկուցիք նաև տեղվույս կուսակալին, որ արգելիչ և զգուշական ամեն միջոց ձեռք առնե տխուր դեպքերու տեղի շտնու համար: Վալին խոստացավ և հավաստեց, որ զինվորական միջոցներ ևս ձեռք առնված են՝ անդորրությունը նահանգին մեջ պահպանելու համար:

**Կարողիկոս**— Շատ շնորհակալ եմ: Կուզեի փոխադարձել Ձեր այցելությունը:

**Հրամանատար**— Մենք 8 օր դեռևս Մերսին պիտի մնանք մինչև Զմյուռնիայի «Գորեն»-ը գա Մերսին, որ ավելի մեծ զրահավոր մըն է, և պիտի մնա:

**Կարողիկոս**— Այն ատեն պաշտոն կստանամ .... ներկայացուցիչին որ հանուն ինձ գա Ձեր զրահավորը և փոխադարձ Ձեր այցելությունը:

**Հրամանատար**— Շնորհակալ ենք:

Ապա հրաժեշտ և մեկնեցան:

Թ. 30բ.— Հանուն Սրբազան Կաթողիկոսին Կիլիկիո,

փոխայցելություն և տեսակցություն  
Մերսինի առջև խարսխող  
Գերման «Strasbourg» հաժանավին  
հրամանատար Paschen -ի հետ

11/24 ապրիլ, հինգշաբթի, հետմիջօրեի,  
պրահավորին մեջ:

Գ. Վ. Պ.<sup>24</sup>— Նորին Սրբություն Կաթողիկոսը իր ողջույնները և օրհնությունը կուղարկե իմ միջոցով և շնորհակալություն կհայտնե Ձեր սրտապնդիչ խոսքերուն համար:

**Հրամանատար**— Ի՞նչպես է Սրբազան Կաթողիկոսին առողջությունը և քանի տարեկան է:

Գ. Վ. Պ.— Առողջությունը, ինչպես տեսաք, շատ լավ է և 70 տարեկան է:

**Հրամանատար**— Աղանային ի՞նչ նոր լուրեր ունիք, անդորրությունը լավ է:

Գ. Վ. Պ.— Առ այժմ լավ է, բայց չենք գիտեր վաղը ի՞նչ կպատահի, զի Թուրքիան անակնկալներու երկիր է:

**Հրամանատար**— Ես հարկ եղածը խոսեցա կուսակալին և զորաց հրամանատարին և աներկմիտ եմ, որ արտաքին միջամտության զերծ մնալու համար տխուր դեպքերու աղթ չպիտի տան, պայմանավ որ հայերը պատճառ չըլլան որեւէ զրգուման:

Գ. Վ. Պ.— Հայերը այնպիսի արյունոտ փորձառություն ունին, որ հին վերքերը բուժելու զբաղած լինելով, ի վիճակի չեն պատճառ ըլլալու նոր աղետներու: Ընդհակառակը, միշտ երկյուղի մեջ են և զգուշ, սակայն հարկ է գիտնալ, որ Թուրքերը երբոր կոտորած ընել ուզեն, անպատճառ հայոց վրա ձգելու առիթ մը կփնտռեն ու կգտնեն: Օրինակ, սովորություն ունին միշտ կոտորածներ անաշ լուր տարածելու, թե «հայ ֆեղայիներ լեռներեն կամ Զեյթունեն կուգան և կամ ճամփներնիս աղտոտեցին»:

**Հրամանատար**— 909-ի կոտորածին ո՞րչափ հայերը զոհ տվին:

Գ. Վ. Պ.— Մոտավորապես 30 000 այր, կին և տղա, նույնիսկ մանուկներ:

**Հրամանատար**— Թուրքերուն թիվն ալ մե՞ջն է:

Գ. Վ. Պ.— Ո՛չ, միայն հայոց թիվն է, կաթողիկ և բողոքական միասին: Թուրքերը միայն 300 զոհ ունեցան:

**Հրամանատար**— Կրոնականներ ալ սպաննվեցա՞ն:

Գ. Վ. Պ.— Ոչ ոքի խնայեցին, շատ կրոնականներ սպանեցին, մեկ եկեղեցվո մեջ բողոքական ավելի քան 16 պատվելիներ այրեցին եկեղեցվո հետ, որոնք հոն տարեկան զոհի եկած էին:

**Հրամանատար**— Կիլիկիո մեջ հայոց թիվն ո՞րչափ է:

Գ. Վ. Պ.— Աղանայի և Հալեպի վիլայեթներու մեջ հայոց ընդհանուր թիվն է 350 000:

**Հրամանատար**— Ուրեմն հարյուրին քանի՞ տոկոս են, բաղդատմամբ Թուրքերուն և առհասարակ իսլամներուն:

Գ. Վ. Պ.— Թուրքիա հազիվ 30—40 տոկոս, սակայն, ինչպես գիտեք, ժողովուրդի մը միայն թվական առավելությունը նկատի առնելու չէ, այլև տնտեսական ու իմացական: Արդ, ուր որ այցելեք, Կիլիկիո քաղաքները թե գյուղերը, ուր որ հայ կա, միշտ մեծ ձեռքն է հողագործությունը, արհեստը և վաճառականությունը, ինչպես նաև նշա-

<sup>24</sup> Գրիգորիս վարդապետ Պալաթյան, որ իմանում էր գերմաներեն լեզուն: Հայր սուրբը 1912—1913 թվականներին Բալկանյան պատերազմի ժամանակ հանդիսացել է Պոլսի հայոց Պատրիարքարանի ապահովության հանձնաժողովի անդամ:



նավոր փաստաբան, բժիշկ հայ են, իսկ թուրքը բակալ<sup>25</sup> է և կամ փոքր խանութպան, և առհասարակ քաղաքային և զինվորական պաշտոնյալ։ Ի բնե իսլամ տարրը ազատ ասպարեզներու միտում չունի, այլ միակ իդեալ մը ունի պաշտոնյալ լինելու։

**Հրամանատար**— (Դառնալով իր օգնականին) Շատ ճշմարիտ է։ Միայն թիվը չէ որ արժեք ունի, այլև տնտեսական ու իմացական վիճակը. հայոց քանի՞ տոկոսը կարդալ գրել գիտե։

**Գ. Վ. Պ.**— Հայոց 75 տոկոսը առ նվազն կարդալ ու գրել գիտե, իսկ թրքաց առ առավելն 25—35%։

**Հրամանատար**— Հայերը գերմաններու մասին ի՞նչ գաղափար ունին, նպաստավոր է թե աննպաստ։

**Գ. Վ. Պ.**— Եթե պաշտոնական վերապահութամբ չուզեմ խոսիլ, պիտի ըսեմ, թե հայերը ծանր կ'ատճառներով տարիներ առաջ գերմաններուն այնքան համակիր վերաբերում չունեին, և փոխադարձաբար, այսինքն գերմաններուն հայոց մասին քաղած տեղեկությունց եթե ոչ միակ, գոնե գլխավոր աղբյուրը հրեա աժաններն էին, որոնք իբր քաղաքական, բայց ավելի իբր առևտրական շրջանի գործակալներ, միշտ աննպաստ տեղեկություններ կ'հաղորդեին հայոց մասին Գերմանիա, մանավանդ կեդրոնը Բեռլին, բայց երբ հետզհետե առևտրական ձեռնարկներու բերմամբ ավելի մոտիկ անձնական և անմիջական շփում ունեցան գերմանները հայոց հետ, սկսան ավելի կարևորություն տալ հայ բնիկ տարրին և հայերը ևս փոխադարձաբար երբ համակրություն տեսան գերմաններին, իրենք ալ հարգանք և համակրանք այժմ սկսած են ցույց տալ գերմաններուն, մանավանդ այժմ, երբ կոտեսեն, թե գերմանները իրենց զինվորական պաշտպանությունն ալ ցույց տալու տրամադրություն ցույց կուտան, որուն ապացույց է Ձեր այստեղ զորավոր ներկայությունը անցյալ շուրջ շաբթիի տիրող սարսափեն վերջ։ Այս գործին մեջ հայոց ու գերմաններու հարաբերությանց բարվոքման նպաստեցին ոչ նվազ նաև գերմանական բանակներու Փոքր Ասիոյ մեջ գտնվող մասնաճյուղերը, որոնք ամենօրյա շփումներ ունին հայ պարկեշտ առևտրականներու հետ։

**Հրամանատար**— Շատ գոհ մնացի Ձեր այս իրազեկ տեղեկություններն։ Ձեր տեսությունները ճիշտ կ'գտնեմ և պիտի հաղորդեմ ուր որ անկ է։ Ըսեք խնդրեմ, ստո՛ւյգ են, Եգիպտոսեն մեկ քանի հեղափոխական հա-

յեր եկեր են Կրիկիա, հայերը ապստամբեցնելու և զենքերով լեցուն շոգենավ մը ևս Ադեքսանդրիա եկեր է, բայց չի համարձակիր ցամաք հանել զենքերը։ Կաթողիկոսը համաժիտ է այսպիսի վտանգավոր շարժումի մը։

**Գ. Վ. Պ.**— Ստույգ է, որ այս կարգի փորձ մը եղավ մեկ քանի տաք հայրենասերներու կողմե, բայց հայ հեղափոխական ծանոթ քաղաքական կուսակցությունը ոչ միայն չքաջալերեցին, այլև հակառակեցան վտանգավոր այսպիսի շարժումի մը, նկատելով իրավամբ, որ մենք հայերս մեր քաղաքական, քաղաքակրթական, տնտեսական խաղաղ զարգացումը ապահովելու համար, ասկե առաջ ազատագրման ծարավի բոլոր հպատակ ազգերու տված արյան պարտքը պետք եղածն շատ ավելին վճարած ենք։ Իսկ Սրբազան Կաթողիկոսն ալ բոլորովին հակառակ լինելով, կարելի ամեն զգուշական միջոց ձեռք առավ և վտանգը հեռացուց, ժողովուրդը համոզելով, որ ծայրահեղ միջոցներու չդիմե։ Պատրիարքարանս ևս նույնպես կարելի ամեն միջոց ձեռք առավ այսպիսի վտանգավոր շարժման մը առջևն առնելու համար։

**Հրամանատար**— Կհուսա՞ք, թե այլևս նոր փորձ չպիտի լինի առ այս։

**Գ. Վ. Պ.**— Կհուսամ և կհավաստեմ և ինչպես Սրբազան Կաթողիկոսը Ձեր իրեն այցելության առթիվ շեշտեց, ինք երաշխավորություն կ'ստանան առ այս, և հայոցմե ամեն զգուշություն կ'ըլլա՝ չզրգուելու համար իսլամ ամբոխը, բայց թուրքերը այս միջոցին շատ կ'սկսածելի ընթացք մը և վերաբերում մը ունին հանգիստ քրիստոնեից տարրին, որ 95% հայերե քաղկացած է։

**Հրամանատար**— Ինչո՞ւ թուրք տարրը միշտ թշնամական վերաբերում ունի հանդեպ հայոց։

**Գ. Վ. Պ.**— Պատճառը շատ պարզ է։ Թուրքին կամ իսլամին հանդեպ հայոց ունեցած թշնամության գրգռապատճառը շար նախանձն է, որ առաջ կուգա առևտրական և այլ կյանքի զանազան մրցակցության մեջ իր կրած շարունակական անհաջողություններն։

**Հրամանատար**— Խնդրեմ ինձ լուսաբանեցե՞ք այս մասին։

**Գ. Վ. Պ.**— Ինչպես մեր տեսակցության սկզբեն բացատրեցի, թուրքը միշտ քաղաքային կամ զինվորական պաշտոնյալ լինելու հետամուտ լինելով, ազատ ասպարեզներու ձգտում և մասնավոր ընդունակություն չունի, երբ կոտեսեն, որ հայերը, հակառակ այն քաղաքական հալածանքներու, երկրին արհեստական և առևտրական և այլ ամեն ճյու-

<sup>25</sup> Մթերային խանութի աշխատող։



ղերու մեջ կհաջողին, չի հանդուրժեր, և սիստեմն քրաժ են, մեկ քանի տասնյակ տարին անգամ մը ջարդեր և թալաններ կկազմակերպեն, որպեսզի հայոց հառաջդիմութիւնը կասեցնելով, իրենք իբր թե կարենան հասնիլ, սակայն հայերը իրենց ցեղական աշխատասիրութեամբ, ուշիմութեամբ և ձեռներեց ոգիով մը կրկնապատկելով իրենց ջանքերը, շուտով իրենց եթե ոչ նախկին, գոնե թուրքեն շատ ավելի հառաջադեպ դիրքերին կվերագտնեն, կրկին անոնց շար նախանձն ու ընշաբաղցութիւնը զրգոնելով: Թուրքերը այժմ Ադանայի մեջ բացեցիրաց կըսեն, թե մենք ձեզ ջարդեցինք ու այժմ առաջվրեք ավելի առաջ գացիր, ձեր եկեղեցիները առաջ 800 լիրա հասույթ ունեին տարին, այժմ 2 000 լիրայի բարձրացավ ձեր նոր շինած շենքերուն շնորհիվ, այժմ ավելի փառավոր դպրոց շինեցիր և այլ այս կարգի խոսքեր:

Հրամանատար.— (Դառնալով զբաժնավորի երկրորդ հրամանատարին) Պատճառաբանութիւնները ուղիղ կգտնեմ և այս լուսաբանութիւնները մեզ շատ օգտակար կընան լինել: Եթէ կարծեր, որ գերմանները, երբ գաղութներ ունենան, թուրքերուն այս քաղաքակրթության անպատվաբեր այս բնազդները արմատախիլ լինեն, զի մենք լավ հարաբերութիւններ կուզենք մշակել հայոց և թուրքաց հետ:

Գ. Վ. Պ.— Կհամարուեմ, թե հայերը բարեկամական հարաբերութիւն պիտի մշակեն գերմաններու հետ, բայց կտարակուսիմ գերմաններու թրքաց հետ ունենալիք բարվոք հարաբերության մասին, այս վերջնուլն առաջիններեն ունեցած մտավորական և բարոյական անհամեմատ և ստոր աստիճանի վրա գտնվելուն համար:

Հրամանատար.— Բայց յեթէ կարծեր, որ հայերը լավ հոգակալ լինեն գերմաններու և թրքաց մեջ:

Գ. Վ. Պ.— Օ՜հ, ինչպես չէ, միայն թե այս բանը կախված է գերմաններու հանդեպ հայոց հառաջիկային բռնելիք դիրքին. ո՞րքան քաջալերութիւն գտնեն հայերը գերմաններեն, ա՛յնքան վստահ եմ, թե Ձեր ակնարկած և ցանկացած պաշտոնը հաջողութեամբ պիտի կիրարկեն:

Հրամանատար.— Ահա հաշտութիւնը քիչ օրեն պիտի կնքվի Բալկանյան պետութեանց հետ: Կըսեն, թե ներքին խռովութիւնները պակաս չպիտի լինին և չպիտի դադրին, ինչո՞ւ սակայն...

Գ. Վ. Պ.— Որքան որ Ձեր հարցին ուղղակի թե անուղղակի պատասխանները իմ ցարդ տված բացատրութեանց և լուսաբանութեանց մեջ կընաք գտնել, այսուամենայնիվ մաս-

նավորաբար պիտի շեշտեմ, թե օսմանյան ռեժիմը ինչ ձև և կերպարանք ալ առնե, հիվանդագին վիճակ մը ունենալն չի դադրիր, և որքան ալ պնդողներ լինին, որ երկիրը բարեկարգելու մեծ փափագ ունիւ թուրքերը, բայց բժբախտաբար ընդունակութիւն չունին առ այդ, և ասոր համար մեծագոյն ապացուցները ամեն ատեն կուտան արգեն: Թուրքերը հայերը կամբաստանեն իբր անհանդարտ տարր և անջատողական գաղափարներու ծառայող: Խնդրեմ ըսեք, Բեյրութի մեջ այնքան ցուցեր եղան և կըլլան և ստիպողաբար բարեկարգութիւն կպահանջեն և ծրագիր ալ պատրաստեցին: Բեյրութ հայ չկա, և այս ընդունելը 90 տոկոս իսլամներ են, այսինքն իսլամ արարներ, և 10 տոկոս կամ թող ըլլա 20 տոկոս քրիստոնյա արարներ են: Որովհետեւ, ա՛լ ժամանակը կամ քաղաքակրթական դարն է, որ թշնամի է թրքական հիվանդագին ռեժիմին, որ ամեն կենսունակութիւն կորսնցուց, այլևս օրհասական իր վերջին ժամերուն մեջ կապրի: Եվրոպական պետութիւնները, որքան իրենց իրար հակառակող շահերուն բերմամբ ապրեցնել ուզեն թուրք ռեժիմը, իզուր է: Միայն պատասխանատվութիւնը ստանձնած պիտի [լինին] նորանոր աղետալի արշուճող դեպքերու, քանի որ կազմակերպական կարողութիւն չունին և դարավոր փորձեր վերջ, նոր փորձեր ըրին և վնասակար:

Հրամանատար.— Երզնկայի մեջ լսեցինք, որ հայ տան մը մեջ բռնություն պայթած են: Արդո՞ք քաղաքական դրժակալներու դավադրական գործառնութիւններ են, ներքին շփոթութիւն հանելով առիթն օգտվելու համար (ակնարկ ուսա պետութեան):

Գ. Վ. Պ.— Իզուր եվրոպական պետութիւնը իրար կամբաստանեն իրենց գծած աղդեցութեան շրջանակներու մեջ պատահած վրդովիչ դեպքերու կամ շարժմանց համար, այս բոլոր դժբախտ դեպքերը գործնականապես կապացուցանեն, թե երկիրը աննորմալ վիճակի մեջ կգտնվի և թե ռեժիմը հիվանդագին է: Ներքեցեք, որ Ձեր բարյացակամ վերաբերումն օգտվելով, հարց մը ևս տամ: Եթե, մի՞ արասցեք, Ադանայի կամ շրջակայոց մեջ դժբախտ դեպք մը պատահի, ինչպես 1909-ին եղավ, միայն հանդիսատեսն պիտի լինի, թե իրապես պիտի աշխատիք առջևը առնել՝ զինվոր ցամաք հանելով Ձեր զբաժնավորներ:

Հրամանատար.— Եթե թուրքերը կրկին անգամ կոտորած մը ընել ուզեն և ծայր տան անկարգութիւնը, իմ անձնական պատասխանատվութեանս տակ անմիջապէս զորք պիտի ղրկեմ Ադանա, առջևը առնելու համար ա-



ըյունոտ դեպքերու. զի դժվար է դեպքանատան հետ բանակցիլ, երբ ժամանակ կորսընցընելու ատեն չըլլա և պետք է անմիջական լսարար միջոցներ ի գործ դնել:

Գ. Վ. Պ.<sup>26</sup>—Կթուլատրե՞ք, որ այս պարագան զեկուցանեմ Կիլիկիո Սրբազան Կաթողիկոսին:

Հրամանատար— Ինչո՞ւ չկրնաք տեղեկություն տալ այս մասին իրեն:

Ավելի քան ժամ մը տեղա լինելով տեսակցությունը և ըմպելիներով մեծարանքներ եղած լինելով, հրաժեշտ առինք ու մեկնեցանք զրահավորեն շոգեմակույկով, որով եկած էինք արդեն, և շոգեմակին շուրջ պտույտ մը ընել տվին մեզ և կրկին շոգեմակույկը մոտեցնել տալով, զրահավորին փոստաբարտը նվիրեցին մեզ քսան հատ, որ հիշատակ պահենք:

Պատգամավորությունը շատ զոհ տալովորություն տակ մեկնեցավ և կարևորը գրվեցավ Սրբազան Կաթողիկոսին:

Թ. 35բ.—Հանուն սրբազան պատրիարքին,  
տեսակցություն գերման դեսպան  
պր. Վանգենհայմի հետ  
գերման դեսպանատան մեջ

24/7 ապրիլ 1913:

Պատվիրակ— Սրբազան Պատրիարքը այս նամակով շնորհակալություն կհայտնե գերման «Strasbourg» հաժանավին Մերսին գալով Ադանայի վտանգի օրերուն անդորրության նպաստելուն համար:

Դեսպան— Ուրախ եմ որ լավ տպավորություն թողած է գերման հաժանավին Մերսին գալը և հրամանատարին Կաթողիկոսին այցելելը: Թուրքերուն վրա ի՞նչ տպավորություն ըրավ:

Պատվիրակ— Բնականաբար ծանր տպավորություն թողուց, մինչ քրիստոնյա ժողովուրդին վրա լավ, վստահացուցիչ ու ապահովիչ տպավորություն:

<sup>26</sup> Գրիգորիս ծայրագույն վարդապետ Պալաքյանը, որ այս տեսակցության օրերից ուղիղ մի տարի հետո, ապրիլյան մեծ եղեռնին, մտավորական հայ նահատակների հետ Պոլսից քշվում է դեպի երկրի խորքերը, գերմանացի Վանգենհայմին որակում է «շարասիրտ դեսպան» բառերով, պատմելով հետևյալ դեպքը.

«Մինչդեռ այս միջոցին, 1915 հուլիս-օգոստոսին, ներքին գավառներու մեջ տիրող հայկական համատարած արյան նախնիքը գիշեր ու ցերեկ կշարունակվեր, առանց անմեղ արյունին խանձի հոտն Պոլիս հասնելու, անդին՝ էնկյուրիի հայոց կոտորածի գոժկանն, կեղրոնին մոտիկ ըլլալուն և շնորհիվ երկաթուղու հայ անձնակցի պաշտոնյաներուն՝ շուտով Պոլիս հասավ և

Դեսպան— Ինչո՞ւ իսլամ տարրը գրգռված է Կիլիկիո և Անատոլիո կողմերը: Արդյոք հայերը որե՞նչ պատճառ կուտան:

Պատվիրակ— Որքան ալ հայերը զգուշական ընթացք բռնեն, այնուհանդերձ Բալկանյան պատերազմով իսլամ տարրին մեջ վրեժխնդրության զգացում մը հառաջ եկած է, որուն արժարժման կնպաստեն տեղական թուրք թերթերը, արտատպելով Ռումելիի մեջ

հուլեց մայրաքաղաքին եվրոպացի թե տեղացի քրիստոնյա բոլոր ժողովուրդները: Մանավանդ պապական լիբերալը և անոր աղդեցությամբ ավստրո-հունգարական դեսպանատունը իբր անցան ու բողոք բարձին մետասաներորդ ժամուն...:

Չկրցավ անտարբեր մնալ և գերման դեսպանատունն ևս, և զոնի երևույթներն փրկելու և ի հարկին ապագա պատասխանատվությունն զերծ մնալու կանխահոգ հեռա-տեսությամբ՝ աճապարեց քննիչներ ղրկել էնկյուրի, ձևական քննության մը համար...:

Սակայն կանխավ ներքին գործոց նախարար և հայոց մեծ դաճապետ Թալեաթ կանխեց գերման դեսպանատունն և ինք անձամբ եկավ մինչև էնկյուրի:

Ամբողջ կուսակալության ձորերուն մեջ անթաղ մնացած և երկոտանի ու շորքոտանի զաղաններն հողոտված նահատակ 42 000 հայերու մարմիններն հավաքել տալով՝ ամփոփել հրամայեց հավաքական մեծ գերեզմաններու մեջ, կարծելով այսպես անհետացնել իր և ընկերներուն աննախընթաց եղանադործությանց անգաղտնապահ հետքերը...:

Բայց արդարության արեն ի լույս բերավ դայն...:

Գերման դեսպանատան քննիչն եկավ էնկյուրի, և թուրք բարձր պաշտոնյաներու հետ տեսակցելի, զանոնք հարցափորձելի և ձևական քննություն մը կատարելի վերջ դարձավ Պոլիս և գերման շարասիրտ դեսպան Վանգենհայմին հայտնեց, թե «հայոց վրա տեղի ունեցած ջարդերու հետքն կրող որևիցե ապացույցներու չէր պատահած և թե եղած տարածայնություններն շարակամ զրույցներու միայն հետևանք էին...»:

Իսկ ամեն կողմն գերման դեսպանատուն եղած կծու բողոքներուն և քննադատություններուն կպատասխաներ գերման դեսպան Վանգենհայմ պաղարյամբ՝ քն ի՞նք իրավունք չունի միջամտելու Թուրքիո ներքին գործերուն և բռնաբարելու այսու Թուրքիո վեհապետական իրավունքներն. թե եվրոպական պետություններն ո՞րն էր ան, որ պիտի անտարբեր մնար նմանօրինակ ներքին ապստամբական շարժումներու հանդեպ, և ձեռք չպիտի առներ զսպողական միջոցներ...:

Ըստ գերման դեսպանին, հայույթյան քննաշննարկն համար սահմանափակ համատարած անվաճառ այս կոտորածներն զսպողական միջոցներ էին... և ոչ թե մարդկային պատմության ամենաարյունոտ էջերն իսկ սեղանող անլուր եղեռնագործությունները: (Տե՛ս Գրիգորիս Ժ. վրդ. Պալաքյան, «Հայ Գողգոթան», դրվագներ հայ մարտիրոսագրության, Բեռլինն դեպի Զոր, 1914—1920, Ա հատոր, Վիեննա, 1922, էջ 129—130):



քրիստոնեից իսլամ կանանց և աղջկանց վրա իբր թե ի գործ դրած խժողովությանց մանրամասնությունները: Իսկ տեղական կառավարությունը, փոխանակ արգելիչ միջոցներ ձեռք առնելու գրգռիչ հրատարակությանց դեմ, թույլատու ընթացք մը բռնած է: Մեկ բանի թերթեր հետս բերած են վերջին ճամբորդությունն: Բաց աստի, շար նախանձ մը ունի իսլամ տարրը ընդդեմ քրիստոնյա տարրին, այսինքն հայոց, զի այժմ բացի ծովագերք գտնվող հույներեն, ներքին դավառներուն մեջ քրիստոնյա ժողովուրդը միայն հայ մնաց: Կնախանձին, որ ինչո՞ւ հառաջադեմ են և առևտրական հրապարակը բռնած: Աղանաջի թուրք ժողովուրդը համարձակ կրսե, թե 3—4 աստի առաջ կոտորեցինք և այրեցինք ձեր տունները, այժմ առջինն ալիկի մեծ տուններ շինեցիք, կրկին առևտուրը ձեր ձեռքն է ու փայլուն դիրքեր ունիք:

Դեսպալան— Որովհետև թուրք և իսլամ ժողովուրդը քրիստոնյա տարրին չափ ընդունակ չէ հառաջդիմության և քաղաքակրթության՝ իր կրոնին պատճառով: Ես վերջին օրերուն երբ առիթ ունեցա մեծ եպարքոսը տեսնելու, Շեքեթ փաշայի պետքը զգացուցի ներքին անդորրության խիստ պահպանման, զգացնելով, որ ներքին խառնաշփոթության մը պարագային, ծանր հետևանքներ հառաջ կրնան գալ և ասիական Թուրքիան ևս միանգամ ընդմիշտ կորստյան մատնվի: Փաշան ինք ևս հայտնեց, որ ասոր համոզված է և թե ծայր աստիճան խիստ հրամաններ տված է Անադոլուի կուսակալներուն՝ անդորրության պահպանման համար: Միթե իսլամ տարրը ինք համոզված չէ՞ ասոր, գիտնալով, որ 909-ի պարագաները չեն և այժմ նոր իրողությանց առջև կգտնվին՝ Բալկանյան պատերազմին հետևանքը:

Պատվիրակ— Այո՛, վսեմաշուր մեծ եպարքոսը կրնա այս մասին գաղափարակից լինիլ Ձեզ և խիստ հրամաններ ալ տված լինիլ, բայց թուրք խուժանին հոգեբանությունը տարբեր է և նա այնքան զարգացում մը չունի, որ հեռատես կերպով տրամաբանի դեսպանի մը կամ եպարքոսի մը պես: Խուժանին հոգեբանությունը տրամաբանութենե շառաչողովոր, այլ միայն կիրքերն և զգացումն, այսինքն շար նախանձն և վրեժխնդրական զգացումներն:

Դեսպալան— Կիլիկիան գեղեցիկ երկիր չէ՞:

Պատվիրակ— Այո՛, վսեմաշուր, ավելի գեղեցիկ քան Եգիպտոսը, զի Եգիպտոսը մեկ նեղոս ունի, մինչդեռ Կիլիկիան քանի մը նեղոսներ, բայց ափսոս որ 909-ի սոսկալի կոտորածին ավերը գեռ կտեսնվի, և ո՞ր քա-

ղաքն ու գյուղը որ մարդ այցելե, այրած և քանդված տուներու ականատես կըլլա: Կոտորածը զարհուրելի եղած է:

Դեսպալան— 909-ին ևս մենք զրահավորներ զրկեցինք, բայց զժբաղդաբար աղետին առջևը չկրցան առնել:

Պատվիրակ— Որովհետև հրաման չունին Աղանա զորք զրկելու կամ զինվոր ցամաք հանելու, և միայն դիակներ լուսանկարելու համար գնացած եղան Մերսին: Ներեցեք, որ, վսեմաշուր, Ձեզ հարց մը տամ. արդյոք նոր զժբախտության մը առջևը առնելու համար կարելի չէ՞ որ Մերսինի առջև միշտ գերման զրահավոր մը խարսխած լինի, որով քրիստոնյա ժողովուրդը մեծ ապահովություն պիտի վայելեր անոնց մշտակա ներկայությունը տեսնելով ի Մերսին, և այնու երախտապարտ պիտի մնար Ձեր կառավարության:

Դեսպալան— Այո՛, բայց մեծ ծախքերու կկարոտի այդ:

Պատվիրակ— Բայց չէ՞ որ Բաղդադի երկաթուղիի գծին համար գերման բանկաներ միլիոններ ծախսած են ու կծախսեն և անոնց պահպանության համար կարժե որ զրահավոր մը գոնե սպասե Մերսին, եթե նույնիսկ քրիստոնյա ժողովուրդին ապահովության հարցը շատ չհետաքրքրե եվրոպացի պետությունները: Մանավանդ որ կոտորածի մը զժբախտ պարագային հառաջ գալիք նյութական մեծամեծ վնասները կարելի է հակադրել Մերսինի առջև զրահավոր մը պահելու համեմատաբար շատ փոքր նյութական զոհողությունով, քանի որ որևէ զրահավոր իրեն չըլլա, վերջապես ծովու վրա տեղ մը պիտի մնա:

Դեսպալան— Այո, բայց մենք Բեյրութը ևս ինչպես և Աղեքսանդրիա միշտ շրջող զրահավոր ունինք, այսինքն միշտ այդ ջուրերուն մեջ կշրջին: Վտանգի պահուն կրնան հասնիլ: Այժմ «Strasbourg»-ը Պոլիս կուգա, «Գյոթեբեն»-ը իրն է և երբ «Գյոթեբեն»-ը մեկնի, ուրիշ գերման զրահավոր մը պիտի Մերսին երթա, որով համարյա թե քիչ միջոց ձգելով, շարունակաբար մարտանավ ունինք նույն ջուրերը:

Պատվիրակ— Ներեցեք որ, Ձեր վսեմության բարյացակալութենեն քաջալերված, հարց մը ևս տամ: Աղանաջի մեջ աղետի մը կամ կոտորածի մը պահուն գերման զրահավորին հրամանատարը արտոնություն ունի՞ զորք ցամաք հանելով Աղանա զրկելու քրիստոնյա ժողովուրդին պաշտպանության համար:

Դեսպալան— Բայց Դուք շատ լուրջ հարց մը կուտաք, որուն կարելի չէ այժմն պատաս-



խանել, զի միջազգային հարց կծագի այդ պարագային:

**Պատվիրակ**— Այո, Վսեմաշուք, բայց ուրեմն ի՞նչ կարծիք եմ կրող պահանջներու Մերսինի այցելելը. եթե թուրք կամ իսլամ խոստանք գիտնա, թե զինվոր ցամաք պիտի հանվի, խելոք և հանդարտ կկենա, ապա թե ոչ՝ 909-ին վիճակը հառաջ կուգա, երբ եվրոպական այնքան զրահավորներ մինչ Մերսինի առջև խարսխած էին, Ադանայի և շրջակայից մեջ ահռելի կոտորած տեղի կունենար:

**Դեսպալան**— Այդ մասին որոշ պատասխան չեմ կրնար տալ այժմեան, բայց կխորհիմ այդ մասին: Ամեն պարագայի տակ այժմ մենք հայոց վրա լավ գաղափար կազմած ենք. շինարար ժողովուրդ են, հառաջդիմության կարի ընդունակ և պատերազմի մեջ ալ հույն, սերբ և բուլղար զինվորներու նման դասավիճելու են, այլ իբր քաջ և հավատարիմ զինվոր կկենցան, ինչ որ գնահատվեցավ նույնիսկ օսմանյան պետական բարձր պաշտոնեւորներէն: Հայերը լավ կընեն, որ ապրատամբական շարժումներու մեջ այլևս չգտնուվելով, դիվանագիտական եղանակով իրենց գոյության դատը պաշտպանեն: Չե՞ք կարծեր, որ հայոց մեջ շարժում մը կպատրաստվի:

**Պատվիրակ**— Իմ ունեցած ապացույցներու վրա, կհավաստեմ, թե ոչ մեկ հայ այժմ ապստամբութեան մեջ չի խորհիր իր կյանքի, ինչքի և պատվի ապահովութիւնը ձեռք բերել, այլ վստահ է, թե Եվրոպան այս անգամ բարենորոգումներով պիտի ապահովի իր անտանելի կացութիւնը:

**Դեսպալան**— Ի՞նչ լուրեր կուգան հայաբնակ նահանգներէն և թե բարեկարգութեան ծրագրի մասին Ձեր կարծիքը ի՞նչ է: Լավ չէ՞ որ օսմանյան պետութիւնը ինք գործադրե բարեկարգութիւնները:

**Պատվիրակ**— Հայաբնակ նահանգներէն շատ գեշ լուրեր կուգան և անմիջապէս վտանգի երկյուղի մեջ է Անատոլիոյ հայ ժողովուրդը, իսկ թե Անատոլիոյ բարեկարգութեան ծրագիրը ո՞վ լավ է որ գործադրե, դժբախտաբար օսմանյան կառավարութիւնը այնքան ցարդ ապացույցներ տվաւ իր անուղղամտութեան, որ ոչ ոք կհավատա, թե սա այդ անկեղծ բարյացակամութիւնն ունի, թող թե ուզե իսկ ընդունակ չէ բարեկարգելու երկիրը, և միթե ասոր կենդանի ապացույց չէ՞ Ռումելին, որ փոխանակ անկեղծութեամբ և ուղղամտութեամբ բարեկարգութեան ձեռնարկելու, խաբեպատիր միջոցներու դիմեց ու կորսնցուց սքանչելի ապագա խոստացող իր եվրոպական ամբողջ հողերը: Մենք բա-

րեկարգութիւնը միայն կհասկնանք եվրոպական կոնտրոլի տակ, պայմանով որ եվրոպական կոնտրոլը իրական լինի և ոչ թե անվանական, երեսփոխանը փրկելու համար:

**Դեսպալան**— Քրդական շարժումներու մասին լուրեր կա՞ն արդոյր: Չե՞ք կարծեր, որ ոռոսական ազդեցութեամբ հառաջ եկած լինին:

**Պատվիրակ**— Մենք գովառական առաջնորդներն տեղեկագիրներ ստացած ենք, ինչպէս Տիգրանակերտ, Վան, Բաղեշ և այլն, որով այլևս գաղտնիք մը չէ, որ գարնան հետ քրդական շարժումներ կպատրաստվին, և կառավարութիւնը անտարբեր է, գոնե դեռ առ այդ կարգադրութիւն մը չէ ըրած և այդ քրդական շարժումը հետզհետե խորհրդավոր հանգամանք մը կառնե, իսկ թե ոռոսական թելադրութեամբ արդունք է, որքան ալ այդպէս կկասկածվի, սակայն մեզի համար մտք է և ոչ մեկ ապացույց կա առ այդ. կամ գոնե մեզ անծանոթ են: Արդոյր կրնա՞մ հարցնել, թե ինչպէս Անատոլիոյ հայաբնակ նահանգներու արմատական բարեկարգութեան մասին կխոսվի, միթե ժամանակը եկած չէ՞, որ Կիլիկիոյ շրջանակին համար ևս բարեկարգութեան մասին խորհվի, և այս ըսել չէ, թե անջատում կուզենք, սխալ չհասկցվինք: Հայերը հարազատ օսմանցիներ են և իրենց բախտը այս երկրին հետ կապած: Միթե Սուրիոյ մեջ այնքան մեծ շարժում մը որ կա, բարեկարգութիւն, անջատում կուզեն. այդ շարժման պարագլուխներն ալ, պահանջողներն ալ իսլամ արաբներ են: Միթե անո՞նք ալ հայոցմէ թելադրված են, որովհետե երկիրը անտրամալ վիճակ մը ունի և այլևս այս վիճակը չի կրնար հարատեւել:

**Դեսպալան**— Այո՛, բարեկարգութեան պահանջը ընդհանուր է և ազոր մեջ է ո՛չ միայն երկրին մեջ ապրող ժողովուրդներու փրկութիւնը, այլև օսմանյան պետութեան և փրկութիւնը: Ես ալ կտեսնեմ, որ ժամանակը եկած է Կիլիկիոյ մասին ևս մտածելու և բարեկարգութեան ծրագիր մը պատրաստելու, այս մասին կխորհինք արդեն: Ձեր հայտնած երկյուղներու մասին, այսինքն ներքին շփութեանց հավանական ծրագրված պայթման մասին ապացույցներ ունի՞ք:

**Պատվիրակ**— Այո՛, պետք եղածն ավելի ունինք, և եթե հաճիք ընդունիլ, իմ ուղևորութեամբս անձամբ կատարած քննութեանս տեղեկագրին զլրավոր գծերը և իրողութիւնները թարգմանել տալով ֆրանսերէնի, Ձեր վսեմութեան կրնանք դրկել:

**Դեսպալան**— Այո՛, շատ լավ կըլլար, զի ապացույցներու վրա լավ է, որ որեւէ դիմում լինի:



Պատվիրակ— Շատ սիրով, ներեցեք որ Ձեր բարեհաճ ունկնդրության համար շնորհակալությունս հայտնելով մեկնիմ:

Դեսպան— Հաճեցեք խորին հարգանքներս հայտնել ամենապատիվ սրբազան պատրիարքին: Գոհ եղա Ձեր այցելության և տեսակցության առթիվ: Կհուսամ, թե առիթ կունենանք կրկին տեսնվելու: Ուրեմն ցտեսություն:

(Տեսակցություն 45 րոպե և գերմաներեն):

#### Թ. 40ա— Մ. Մանդրլշտամի հետ տեսակցություն

Մայիս 14/27:

Մ. Մանդրլշտամ հանուն ղեսպանին հայտարարեց, թե ուսական կառավարության բարյացակամ տրամադրություններն հայոց նկատմամբ անփոփոխ կմնան, թե նույն հայեցակետն ունի, զոր ղեսպանը քանիցս պարզած է իրեն ներկայացող հայ պատգամավորություն:

Դիտել տվի, թե մենք հայերս ոչ թե կասկած ունինք ուս կառավարության բարյացակամության մասին, այլ կվախնայինք միայն, թե այնպիսի ղեսպանը կրնան պատահած ըլլալ բաղաբական աշխարհի մեջ, որ հայոց դատին վնասեն և հապաղեցնեն հայոց դատը պաշտպանելու համար նախաձեռնարկ ըլլալու մասին Ռուսիո մտադրությունն ու խոստման գործադրությունը: «Ոչ» էր պատասխանը: Գալով ծրագրին, ղեսպանը կհուսա, որ իր կառավարությունը քիչ ատենեն իր կարծիքը պիտի հայտնե, թե պետք է համբերենք: Դիտել տվի, թե անթերի ծրագիր մը պատրաստված ըլլալու հավանությունը չունինք, ինչ որ էական կնկատենք, այն է, որ հայարնակ գավառներուն մեջ կենսական բանորոգումներն իրագործելու անհրաժեշտ կարգադրություններն ընեն Եվրոպա: Ինքն ալ իր համամտությունը հայտնեց:

Դեսպանը այն կարծիքը հայտնած է, թե լավագույն է, որ առ այժմ հայ պատվիրակությունը (Պողոս փաշայի) իր տեղին շարժի:

Մ. Իլչոֆոքի միշտ բարյացակամ և մտերիմ հարաբերություն ունի Պողոս փաշայի հետ, ըսած է ղեսպանը:

Առաջին տեսակցությանս մեջ ալ հետաքրքիր եղած է Մ. Մանդրլշտամ իմանալու, թե արդյոք ուրիշ ղեսպանատանց հետ ալ հարաբերության մեջ ենք: Թե արդյոք մեր ծրագիրը անոնց որեւէ մեկուն ալ մատուցած ենք: Պատասխանած էի, թե որչափ որ ես գիտեմ, ծրագիրն ներկայացված չէ որեւէ ղեսպանատան, Ռուսիո ղեսպանատու-

նեն զատ, թե ավելի որոշ տեղեկություն պիտի քաղեի այդ մասին Պատրիարքարանէն: Մ. Մանդրլշտամ այս անգամ նույն խնդրույն անդրադառնալով ըսավ, թե ինքն ապացուցներ ունի հաստատող, թե մեր ծրագիրն Ֆրանսայի ղեսպանին ալ հանձնված է: Երբ ես պնդեցի, թե իմ ունեցած տեղեկություններս իր ըսածին հակառակ են, թե մեր պաշտոնական ծրագրի զխավոր գիծերեն ոմանք միայն բերանացի հաղորդված են, ինչպես Ռուսիո ղեսպանն ալ արդեն թելադրած էր, այն ատեն անուղղակի կերպով հետս կողեց իր նախապես ըսածը և ըսավ, թե նույնիսկ ի՞նչ հաղորդված ըլլար մեր ծրագիրը Ֆրանսական և անգլիական ղեսպանատանց, աղկն որեւէ վնաս չէր կրնար հառաջ գալ. և հայտնեց, թե ղեսպանը կհանձնարարե, որ մեր ծրագիրը մատուցվի թե՛ ֆրանսական և թե՛ անգլիական ղեսպանատանց, բայց երբեք գերմանական ղեսպանատան: Ինչ որ գերմանական ղեսպանատուն հաղորդվի, ըսավ, կրնաք վստահ ըլլալ, թե անմիջապես պիտի հաղորդվի թուրք կառավարության: Այդ առիթին օգտվելով ըսի, թե հայերու ըսածներու կամ ըրածներու մասին այլևայլ զրույցներ կրնան ղեսպանատուն հասնիլ, բայց ես, որ Պատրիարքարանի պաշտոնական մարմնույն հետ շփման մեջ եմ, կրնամ ապահովեցնել զիրենք, թե Պատրիարքարանի ջանքը եղած է հետեիլ ուս ղեսպանատան խորհուրդներուն: Խոսակիցս զոհոնակությունը ընդունեց այս հայտարարությունը:

Մ. Մանդրլշտամ քանիցս հետաքրքիր եղավ իմանալու, թե հայերը միացա՞լ են իրենք իրենց մեջ, թե ամենքն ալ բարեկարգության խնդրույն մասին նույն գաղափարներն և նույն փափագներն ունին: Քանիցս ակնարկեց Նորատունկյան էֆենդիին<sup>27</sup>, թե ինքն ալ արդյոք համակիր է բարեկարգության պահանջին, թե ի՞նչ մտայնությամբ երեսփոխանական ժողովն իրեն ատենապետ պահեց զինքն, երբ թուրք զահլիճին մեջ այսքան կարևոր պաշտոն մը ստացած էր, թե ի՞նչ մտայնությամբ ատենապետության նույն պաշտոնին կկոչվի զարծյալ նոր ընտրությունը: Ակնարկեց Ոսկան էֆենդի Մարտիկյանին<sup>28</sup>, և զարմանք հայտնեց, որ հավանե՞ր է ընդունիլ իր ներկա պաշտոնը թուրք զահլիճին մեջ. մինչդեռ Զոհրապ էֆենդի մերժած էր այդպիսի պաշտոն մը ընդունիլ ասկե առաջ:

<sup>27</sup> Գարրիել Նորատունկյան, Թուրքիայի հանրօգուտ շինությունց և առևտրի նախարար:

<sup>28</sup> Ոսկան Մարտիկյան, Թուրքիայի հեռագրական և թղթատարական նախարար:



Ըսի իրեն, թե ուղղակի պատրիարքին քովն կուգայի, թե զինքը մտքի տառապագին վիճակի մը մեջ գտած էի: Շատ մը կողմերե, որոնց անունները թվեցի, նամակներ և հեռագիրներ եկած են, և նորանոր խժոժություններ կգուժեն: Թուրք կառավարությունը գիտե որ, ըսի, Եվրոպա և ի մասնավորի Ռուսիա այնքան կհետաքրքրվի ներկայիս մեջ հայոց ճակատագրով և լուրջ ազդարարություններ եղած են իրեն, և տակավին կհամարձակի այնպիսի ոճիները թուլատրել և անել կացություն մը կմատնվի Պատրիարքարանը: Ինքն այն տեսությունը պաշտպանեց, թե թուրքերը գիտեն, որ բոլորովին իրենց շահուն հակառակ է որևէ անկարգություն Հայաստանի մեջ, թե արդարև իրենց հարկ եղած ազդարարությունը եղած է, թե չեն ուզեր, որ անկարգություններ պատահին, թե երբեք հրաման չպիտի տան կոտորած կատարելու և այլն, բայց այսուամենայնիվ անկարող են ոճրագործ քրդերն զսպելու և անոնց չարագործություններն արգելելու, զինվորական ուժը կպակսի իրենց տեղվույն վրա, թե Եվրոպական Թուրքիո կորուստը իրենց կարևոր դաս մը սորվեցուցած է, և այլն:

Ես ըսի, թե իրաց վիճակին մոտեն ծանոթ եղողներուն համոզումն այն է, թե ամենն ավելի անկեղծ, բարի կամեցողությունն է որ կպակսի: Ինչպես անցյալ անգամ, նույնպես և այս անգամ հետաքրքիր եղավ իմանալ, թե արդյոք կվախնա՞նք, որ ընդհանուր կոտորածներ կընան պատահիլ: Պատասխանեցի, թե այդ սարսափը կա ամենուրեք, թե ճիշդ Եվրոպական և ի մասնավորի ռուսական միջամտության երկյուղը չըլլա, ամեն իրականություն կա, որ այդպիսի կոտորածներ պատահին շատ տեղեր:

Ըսավ, թե Ռուսիո կառավարությունը հայտարարած է, թե այդպիսի կոտորածներ չպիտի թուլատրեն: Ինչպես անցյալ անգամ, նույնպես և այս անգամ այն հարցը մեջ բերավ, թե ի՞նչ պիտի ըլլա Պատրիարքարանի պատասխանը հիշատակարանի մատուցման առթիվ թուրք վարչապետին ըրած հայտարարություններուն, և իր խոսքերով այն տպավորությունն ընել ուզեց իմ վրա, թե հուսախաբ եղած է, որ Պատրիարքարանը կտրուկ կերպով դեռ չէ արտահայտված այդ մասին պաշտոնապես: Պատասխանեցի, թե այդ խնդիրը ամենալուրջ խորհրդածությանց առարկա եղած է այժմ, թե բոլոր խմբակցություններուն նպատակն է համերաշխաբար գործել այդ մասին, թե դուրին է երևակայել, թե ընդհանուր քաղաքականության ներկա այնքան անորոշ և փափուկ վիճակին մեջ

Պատրիարքարանի պատասխանատու մարմինները որքան պետք կզգան շրջահայեցություն մը շարժելու և այլն: Անուղղակի եղանակով ջանացի իմանալ, թե արդյոք դեսպանատունը կարծիք մը ունի՞ այդ մասին հայտնելու Բայց ինքն զգուշացավ որևէ որոշ կարծիք հայտնելու:

Անշուշտ Ձեր գործակատարն, ըսավ, ոճիրներու նոր եկած տեղեկություններն պիտի հաղորդե Բարձրագույն դռան, սպասենք և տեսնենք, թե Դուր ի՞նչ բացատրություններ պիտի տա անոնց մասին:

Թ. 42բ.— Երկուշաբթի, ժամը 11  
Մայիս/հունիս 1913:

Առաջին թարգմանը մեզ ընդունած պահուն հայտարարեց, թե Մահմուդ Եկեքթ փաշան<sup>29</sup> ևս ժամադրություն մը առած է տեսակցության մը համար դեսպանի հետ: Այս ձախող պարագան տեսակ մը փութկոտություն ազդեց մեր տեսակցության:

Իսրայալ<sup>30</sup>— Վարչությունը վիճակին ամենածանր հանգամանքը նկատի առնելով, երեկ գիշեր բացառիկ գումարում մը ունեցավ և երկար խորհրդակցութենի վերջ, անհրաժեշտ համարեց այսօր իսկ սույն հիշատակագիրը ներկայացնել Ձեր վսեմություն:

Դեսպալ— Ուշի-ուշով պիտի կարդամ սույն հիշատակագիրը: Այժմեն իսկ կհայտնեմ, թե ուս կառավարությունը լրջորեն կզբաղի հայկական խնդրով: Դեռ կարելի չէ ճշտել, թե ի՞նչ ձևով և ի՞նչ պայմաններու տակ պիտի ներկայացվի, բայց կընաք վստահ ըլլալ, թե խիստ լուրջ և ազդու կերպով նկատի պիտի առնվի:

Իսրայալ— Էական կետ մը կա, որ հայ ազգին համար գոյություն խնդիր է, այն է, թե արդյո՞ք ռուս կառավարությունը և Եվրոպական մյուս տերությունը անխախտ հավատքով համոզված են, թե առանց Եվրոպական կոնտրոլին, թուրք կառավարությունն որևէ կերպով կարող չէ երաշխավորելու հայոց ապահովությունը և հավասարությունը: Ասկե առաջ ալ պետությունը լրջորեն ի նկատի առին հայոց վիճակը և թուրք կառավարությունը իր ստորագրությամբ երաշխավորեց իրական բարեկարգումներու գործադրու-

<sup>29</sup> Վարչապետ:

<sup>30</sup> Մեր կարծիքով, սա պետք է լինի Ազգային երեսփոխանական ժողովի անդամ, Պոլսի Բերա, կառավարչա թաղամասի ներկայացուցիչ Ստեփան Գարալանը, որ եղել է նույն ժամանակ Պոլսի Ազգային կենտրոնական վարչության Քաղաքական ժողովի առաջին ատենապետը, և ոչ թե Պալաթ թաղամասի երեսփոխան Երվանդ Գարալանը:



ությունը՝ ընդ հսկողությանը ենթարկվող պետությունների, բայց որովհետև Եվրոպայի մասնակցությունը պայմանավորված չէր, 61-րդ հոդվածի արդյունքը աղետալի եղավ հայ ազգին համար: Հայերը փորձառության այս պահանջները գտնեցին, արդյոք Եվրոպական պետությունները գտնեցին այս անգամ իրենք ալ պիտի օգտվին այս փորձառությունները:

Դեսպալան— (Ժպտեղով) Այո՛. այս անգամ տերություններն ալ պիտի օգտվին այս փորձառություններն և ռուս կառավարությունը այս մասին ամեն ջանք պիտի ընե, միայն թե, այսօր ես անձամբ ռուս կառավարության վերջնական որոշումները ի վիճակի չեմ Ձեզ հայտնելու, բանդի դեռ ինձ հաղորդված չեն, բայց կրնամ այժմին Ձեզ հայտնել, թե ռուս կառավարությունը լրջորեն, խիստ լրջորեն ձեռք առած է Ձեր խնդիրը և Ձեր պահանջումներուն գոհացում տրվելու համար ջանք չպիտի խնայի:

Չոհրապ— Ինչպես գիտեք, Պատրիարքարանի ուղղությունն եղած է պատճառաբանել մի նախապատրաստական ծրագիր մշակել և ռուս կառավարության առաջարկելի բարեփոխումներու իրադեպ ըլլալն վերջ բարեփոխել վերջնական ծրագիրը, ներկայացնել Եվրոպական պետությանը: Արդ, մեր Եվրոպայի պատգամավորությունը շատ նեղ վիճակի մեջ կգտնվի: Ամեն կողմանն ինքզնույն, որ հայոց հիմնական պահանջմանց ծրագիրը ներկայացնե և պատգամավորությունը դեռ չունի ի ձեռին վերջնական ծրագիր մը:

Դեսպալան— Անմիջապես հեռագրով պիտի խնդրեմ, որ կառավարությունս փութացնե զրկել ինձ ծրագիրը և իր դիտողությունները:

Չոհրապ— Թե՛ թուրք կառավարական բարձր շրջանակներու և թե՛ Եվրոպայի ոչ պաշտոնական բայց կարևոր դիրք ունեցող անձնավորությունց մոտ համոզում մը կտիրե, թե անգլիական և գերմանական պետությունները որոշ համաձայնությամբ և ինչ-ինչ առավելությանց փոխարեն, որոշած են թուրք կառավարության հանձնարարություններով գոհանալ և ռուս կառավարությունը չեզոքացնել: Այս լուրերը մեծ մտահոգություն կպատճառեն հայ ազգին, բանդի եթե ստույգ են, ճշմարիտ աղետ մը պիտի ըլլան և հուսահատության պիտի մատնեն հայ ազգը:

Դեսպալան— Այս լուրերը բացարձակապես սուտ են: Թուրք կառավարության վաղեմի սովորությունն եղած է այս տեսակ ինքնախաբեկությամբ օրորվիլ: Նոյակ համաձայ-

նությունը կազմող տերությունները կատարելապես համաձայն են: Դարձյալ կկրկնեմ, այս երեք կառավարությունները<sup>32</sup> լրջորեն կզբաղին հայկական խնդրով և անվրեպ պիտի հանգին ազդու որոշումներու: Այժմին ձեռն և պայմաններուն վրա կարելի չէ որոշ տեղեկություններ տալ Ձեզ:

Չոհրապ— Ինչպես մեր հիշատակագրեն Ձեր վսեմությունը պիտի տեղեկանա, հայ ազգը իրապես անմիջական ջարդի մը վտանգին ենթարկված է: Անցյալ օր սրբազան պատրիարքը ժողովի որոշմամբ կտրուկ և հուսահատական թաքրի մը ներկայացուց անձամբ Մահմուդ Երեք փաշայի, այս թաքրիին թաքգամանված մի օրինակը Ձեր վսեմության մատուցվեցավ:

Դեսպալան— Այո, ստացա և պարունակության տեղեկացա:

Չոհրապ— Հիմա այս դիմումով տեսակ մը դատավարության ճամբու մեջ մտանք: Կուզենք գիտնալ, թե ի՞նչ են ռուս դեսպանատան տեսությունները Պատրիարքարանի մինչև հիմա հետևած և ասկե վերջ հետևելիք ուղղության նկատմամբ:

Դեսպալան— Այո, թաքրի մատնեմ էտապե<sup>33</sup> մըն է: Հարկ է բնականաբար հետևողական ըլլալ և աստիճանավորել Ձեր դիմումները և բռնելիք ընթացքը: Այս հիշատակագիրը, որ ինձ ներկայացուցիք, պետք է որ միայն գաղղիական և անգլիական դեսպանատանց միայն ներկայացնե և հայտնեք, թե միմիայն իրենց տված եք: Մեծ գաղտնապահություն և շրջահայեցություն անհրաժեշտ է (գաղտնապահությունը խստիվ շեշտեց): Արյունահեղության տեղի տվող ամեն պատճառներն և կառավարության հետ brusque<sup>34</sup> խզումն զգուշացնե: Այժմ սպասողական դիրք մը կրնեք և զեպքերուն կհետևեք: Եթե կացությունը բացառիկ կերպով ծանրանա, դարձյալ կխորհրդակցինք:

Չոհրապ— Կացությունը իրոք շատ ծանր է: Թուրք պաշտոնական բարձր շրջանակներու և կեդրոնի մեջ սա՛ համոզումը կտիրե, թե ռուս կառավարությունը կզրդեք բողբոք օսմանյան իշխանությանց դեմ և թե օսմանյան կառավարությունը թուրքերու և մահմեդական երեւելիներու դեմ խիստ միջոցներու դիմելով, ավելի ծանր վտանգի մը պիտի ենթարկվի քան այն վտանգը, որ կրնա ծագիլ հայկական խնդրին: Հետևաբար այնհարձեշտ է, որ թուրք կառավարությունը համոզված ըլլա, թե ռուս կառավարությունը այլևս չպի-

<sup>32</sup> Ռուսաստան, Անգլիա և Ֆրանսիա:

<sup>33</sup> Հանգվարան:

<sup>34</sup> Խիստ:

<sup>31</sup> Ազգային երեսփոխանական ժողովի Սամաթիայի երեսփոխան:



տի հանդուրժե, որ հայկական ջարդ մը տեղի ունենա. թե հայկական ջարդ մը Ռուսիո կողմանե անմիջական ազդու միջամտություն մը հառաջ պիտի բերե և այս մասին դրական միջոցներ ձեռք առնված ըլլալուն հայտնի ապացույցները պետք է թե՛ քրդերուն և մահմետական երեւելիներուն և թե՛ Բարձրագույն դռան ուշադրությունը գրավեն:

Դեսպան— Արդեն քանիցս ազդարարեցի հանուն ռուս կառավարության, թե հայկական ջարդ մը աղետալի պիտի ըլլա թուրք պետության համար: Այս իմաստով ամեն կողմանե ազդարարություններ եղած են: Չեմ հուսար, թե թուրք կառավարությունը պիտի թույլատրե ընդհանուր ջարդ մը:

Գաւալան— Պատրիարքարանի վրա կծանրանա ահեղ պատասխանատվություն մը: Այսօր ամբողջ հայ ազգը իրավամբ կպահանջե մեր վարչութենէն, որ հավաստենք, թե ամեն միջոց ձեռք առնված է, որպեսզի ընդհանուր ջարդ մը անկարելի ըլլա: Արդ, արդի կառավարության դեմ թե՛ մայրաքաղաքի, թե՛ գավառներու մեջ ահագին առեւելություն մը կա, բացարձակ անիշխանություն մը, խուլ ըմբոստություն մը կտիրե: Անկարելի

չէ, որ ընդհանուր ջարդի մը առաջին առեւելու կարողությունն և կամ իմաստությունը պակասի թուրք կառավարութենէն: Այն ատեն 24 ժամվան մեջ աղետն կատարված, լմնցած կըլլա: Այսպիսի պարագայի մեջ միմիայն ռուս կառավարությունն է, որ նախապես պատրաստված միջոցներու շնորհիվ, կրնա արգիլել պատահելիք աղետին շարունակումը:

Դեսպան— Շատ սխալ հաշիվ մը ըրած կըլլա թուրք կառավարությունը, եթե շարգիլե ամեն միջոցով ընդհանուր ջարդ մը:

Գաւալան— Սխալ հաշիվ ընելը թուրք կառավարության նորմալ հոգեկան վիճակն եղած է միշտ:

Դեսպան— Այդ պատճառով, այս ահագին կորուստները կրեցին, բայց ես դարձյալ չեմ կարծեր, որ ջարդ մը թույլատրելու հանդեպի թուրք կառավարությունը, բայց այս մասին բացարձակ համոզում և հավաստիք իրականորեն անկարելի է: Ապահով եղեք, որ այս մասին շատ խիստ կերպով պիտի խոսիմ հանուն ռուս կառավարության: Նույնպես կապահովւնեմ Ձեզ կրկին, թե Ձեր խնդիրը լուրջ կերպով ձեռք առնված է:

